

ԻՐԱՆԱՐԱՅ ԿԵԱՆՔ

Ամէն տարուայ պէս, այս տարի եւս լոյս տեսան Իրանահայ 3-գեղատիպ օրացոյցները՝ «Նախրի», «Կանթեղ» եւ «Բաֆֆի» անուաներով, որոնք ունեն կրօնական-ազգային եւ իրանական տօների առանձին ցանկեր, հետաքրքիր նիւթեր եւ նկարներ:

Տօները կազմել է հմուտ բանասէր եւ պատմաբան Լեւոն Գ. Մինասեանը:

Հ.Հ. Իրանի նոր դեսպան է նշանակուել Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւոր՝ Գեղամ Ղարիբջանեանը, որն հմուտ պարսկագէտ է եւ երկար տարիների դիւանագիտական փորձ եւ անցեալ ունի:

Ամանորի եւ Մուրբ Մննդեան

տօների առթիւ, Իրանի իսլամական Հանրապետութեան ղեկավարները շնորհաւորական պատգամներ են լղել համայն հայութեան եւ մասնաւորապէս իրանահայութեան:

Թեհրանում անցեալ Նոյեմբերից սկսել է լոյս տեսնել գրական-հասարակական «ԱՊԱԳ-ԱՅ» ամսագիրը, որի խմբագիրն է վաստակաւոր թարգմանիչ՝ Էդիկ Պաղտասարեանը (Գերմանիկ): Վերահրատարակուել է նաեւ «ԱՐԱՔՍ» ամսագիրը, որն տարիներ առաջ լոյս էր տեսնում շատ հետաքրքիր բովանդակութեամբ եւ բարձր տպագրանակով:

Նշելի է զոյգ ամսագրերն էլ խմբագրուում են կարող անձանց կողմից եւ ունեն վաստակաւոր աշխատակիցներ, ու գրողներ: